ՀՏԴ : 947.925

Doi:10.54503/0135-0536-2023.2-35

ՀԱՅ-ԱՂՎԱՆԱԿԱՆ ԶԻՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ (V դարի կեսին)*

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայաստան, Այսրկովկաս, Աղվանք, Սասանյան Պարսկաստան, Վարդան Մամիկոնյան, Վասակ Սյունի, Եղիշե, Ղազար Փարպեցի, Խաղխաղի ճակատամարտ, Կուր գետ, Սեբուխտ, հոներ:

Նախաբան

Աղվանքում պետական միավորման ստեղծման պահից սկսած[1] այն մեծ մասամբ բարիդրացիական հարաբերություններ է ունեցել իր հարևանների՝ մասնավորապես՝ Մեծ Հայքի թագավորության հետ: Սակայն 226 թ. Սասանյան աշխարհակալության ի հայտ գալով՝ նրանք իրենց կառավարման հենց սկզբից խնդիր էին դրել վերացնել Պարսկաստանին հարևան երկրներում գոյություն ունեցող Արշակունյաց հարստության բոլոր ճյուղերը: Այդ ճանապարհին առաջինը հայ Արշակունիներն էին, քանի որ վերջիններս, պարթև Արշակունիների անկումից հետո, այդ թվում՝ նաև IV դ. 30-ական թվականների վերջերից, Աղվանքում կառավարող Արշակունի հարստությունների մեջ գերակա դիրք էին գրավում և դրա արդյունքում առաջնությունն անցել էր հայ Արշակունիներին: Սակայն, ինչպես հայտնի է, այսրկովկասյան[2] ժողովուրդների՝ հայերի, վրացիների, աղվանացիների ու մյուս դաշնակիցների պայքարը Սասանյան Պարսկաստանի դեմ, որը գլխավորում էր Հայոց թագավոր Տրդատ Բ-ն (216–256), ավարտվեց անհաջողությամբ, և այդ պետությունները ժամանակավորապես ներառնվեցին պարսկական տիրապետության մեջ[3]: IV դ. Աղվանքը հիմնականում ուներ պարսկական կողմնորոշում և գտնվելով նրա ազդեցության ոլորտում՝ մասնակցում էր թե՛ հռոմեացիների, թե՛ հայերի դեմ ուղղված պարսից արշավանքներին՝ հասնելով մինչև Ձիրավի դաշտ, որտեղ, ի

---

* *Ներկայացվել է 15. XII. 2022 թ., գրախոսվել է 19. I. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] *Աղվանքում առաջին պետական կազմավորումը ստեղծվել է մ. թ. ա. I դ. 80-ական թվականներին (տե՛ս* Վ ա ր դ ա ն յ ա ն. *2013, 31–42):*

[2] *«Անդրկովկաս» անվանումը գործածության մեջ է մտել XVIII դարից: Կովկասյան լեռներից այս կողմ բնակվողների համար, այս անվանման ճիշտ ձևը «Այսրկովկաս»-ն է (*Գ ա բ ր ի ե լ յ ա ն. *1979, 7,* Հ ա կ ո բ յ ա ն, Մ ե լ ի ք-Բ ա խ շ յ ա ն, Բ ա ր ս ե ղ յ ա ն. *1986, 260): Ուստի նախապատվությունը տվել ենք կիրառության այս ձևին:*

[3] *Հայ-պարսկական պատերազմների և Տրդատ Բ-ի գլխավորած հակապարսկական կոալիցիայի մասին տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. 1983, 26, 28,* Е р е м я н. 1967, 57; Л у к о н и н. 1969, 33–34.

թիվս այլոց, 371 թ. ջախջախվեցին թե՛ պարսկական, թե՛ աղվանական բանակները[4] և տարածաշրջանը ժամանակավորապես զերծ մնաց պարսից գերիշխանությունից:

Այսրկովկասը Սասանյան տիրապետության ներքո

Երկարատև բանակցություններից հետո՝ 387 թ., Մեծ Հայքի թագավորությունը բաժանվում է Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև: Կարճ ժամանակ անց Հայաստանի նախ՝ արևմտյան, ապա՝ 428 թ. արևելյան մասերում վերացվեց Սասանյանների Թշնամի Արշակունյաց թագավորությունը: Պարսկաստանի տիրապետության տակ անցած Հայաստանում 428 թ. ստեղծվեց մարզպանական վարչակարգ[5]: Նման քաղաքականությունը մշակված համակարգ էր. նախ՝ հեռացնել թագավորին՝ գրավելով արքունական հողերը, ապա, եթե հնարավոր է, ոչնչացնել նախարարական դասը: Սա մի միջոցառում էր, որ պարսից արքունիքը կիրառում էր կառավարման նոր համակարգ ներդնելիս: Պարսկաստանը չէր բավարարվելու միայն Հայաստանով. քանի որ դժվարին արգելքը հաղթահարված էր, ապա նոր վարչակարգն ապագայում պարտադրվելու էր այսրկովկասյան մյուս պետություններին՝ 461 թ.[6] Աղվանքին և 523 թ.[7] Վիրքին: Հայաստանում վերացնելով թագավորական իշխանությունը՝ Սասանյան Պարսկաստանը սկզբնական շրջանում դեռևս հանդուրժում էր հայ նախարարների ներքին ինքնուրույնությունը, սակայն վիճակը կտրուկ փոխվեց Հազկերտ Բ-ի (438–457) օրոք: 449 թ. վերջինիս հաջողվում է վճռական հաղթանակ տանել քուշանների[8] նկատմամբ ու ապահովել Պարսկաստանի արևելյան սահմանները: Դրանից հետո պարսից արքունիքը ձեռնամուխ եղավ քրիստոնեության վերացմանն ու զրադաշտականության հաստատմանը տարածաշրջանում: Այս գործընթացն առաջինը սկսվեց մարզպանական Հայաստանում, քանի որ վերջինս Այսրկովկասում քրիստոնեության պատվարն էր, այնուհետև Աղվանքում ու Վիրքում էլ սկսվեց կրոնափոխության հարկադիր գործընթացը: Ինչպես իրավացիորեն նշում էր պատմաբան Բաբկեն Հարությունյանը, ներքին անկախություն վայելող Հայաստանը դարձել էր ատելի պարսից արքունիքի համար, քանի որ հայոց մարզպանության կոդքին արտոնյալ կացության մեջ էին հայտնվել նաև Վիրքն ու Աղվանքը[9]:

---

[4] *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. 1987, 302, 304: Ձիրավի հաղթական ճակատամարտում Աղվանքի Ուռնայր արքայի գերեւարվելու և IՎդ. հայ-աղվանական հարաբերությունների մասին տե՛ս* Վ ա ր դ ա ն յ ա ն. *2018, 14–27:*

[5] *Սասանյան Պարսկաստանի կողմից այսրկովկասյան երկրներին պարտադրված մարզպանական համակարգի վերաբերյալ տե՛ս* Колесников. 1981, 49–56; Хуршудян. 2003, 95–109.

[6] *Ս վ ա զ յ ա ն. 2006, 199–207,* Վ ա ր դ ա ն յ ա ն. *2010, 101–106:*

[7] *Տե՛ս* Կ ե ս ա ր ա ց ի. *1967, 154: Հմմտ.* Бердзенишвили, Дондуа. 1958, 251; Очерки истории Грузии. 1988, 94, 141–142; Շ ա հ ի ն յ ա ն. *2019, 31–32,* Խ ա չ ա տ ր յ ա ն. *2021, 98:*

[8] Дьяконов, Мандельштам. 1958, 346; Очерки истории Грузии. 1988, 59. *Քուշանական պետության սահմանների, պարսկա-քուշանական պատերազմների մասին տե՛ս* Ртвеладзе. 2019, 32–88.

[9] Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. *2003, 33:*

Տեսնելով, որ ձեռնարկվող միջոցառումներն արդյունք չեն տալիս՝ երեք երկրների առաջնակարգ նախարարները կանչվում են պարսից դուռը: Եղիշեն, թվարկելով պարսից արքունիք մեկնած հայ նախարարներին[10], չի նշում, թե Աղվանքից և Վիրքից ովքեր ներկայացան արքունիք: Ղազար Փարպեցին հիշատակում է. «Եւ յաշխարհէն Վրաց՝ բդեշխն Անշուշայ և այլ տանուտեարք աշխարհին»[11] առանց անուններ նշելու՝ չհիշատակելով նաև աղվանից նախարարներին կամ թագավորներին[12]: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ՝ աղվանացիներն էլ էին «միաբան յուխտ Հայաստանեայց»[13], սակայն Հայոց Արևելից կողմանց պատմիչը և նրանցից որևէ մեկին չի հիշատակում: Վերջի-վերջո, արյաց արքային ներկայացած հայոց, աղվանից և վրաց նախարարներն անելանելի վիճակից դուրս գալու միակ միջոցը գտնում են կեղծ ուրացության մեջ[14], որպեսզի կարողանան հայրենիք վերադառնալ: Պարսից արքունիքն ուրախությամբ է ընդունում նրանց որոշումը, սակայն անակնկալներից խուսափելու համար պատանդ է պահում վրաց Աշուշա բդեշխին և հայոց մարզպան Վասակ Սյունու (441–451)[15] երկու որդիներին[16]: Եթե Աշուշա բդեշխի պատանդ մնալով Վիրքը դուրս մնաց համընդհանուր ապստամբությունից, ապա աղվանից Վաչե Բ արքան այդ ժամանակահատվածում ուրացավ քրիստոնեությունը՝ մոգություն ընդունելով[17], փորձելով այդ ճանապարհով հաշտվել պարսիկների հետ՝ դավաճանելով ընդհանուր գործին՝ միայնակ թողնելով դաշնակից Հայաստանին: Այդ առումով ընդունելի չէ աղվանագետ Հենրիկ Սվազյանի տեսակետը, թե դրա պատճառը պարսից արքունիքի վարած պառակտչական և զիջողական քաղաքականությունն էր[18]:

---

[10] Ե ղ ի շ է. 1989, 84, 86:

[11] Ղ ա զ ա ր ա յ Փ ա ր պ ե ց ւ ո յ Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն Հ ա յ ո ց. 1982, 108:

[12] V դ. կեսին Աղվանքում թագավորական իշխանության գլուխ էր կանգնած Վաչե Բ Արշակունին (444–461) (տե՛ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 1983, 15–17): Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Վաչեն Աղվանքում սկսել է թագավորել 444 թ. (Բ ա ր խ ո ւ տ ա ր ե ա ն ց. 1902, 75): Նրա կառավարումը տևել է մինչև 461 թ., երբ վերացվեց թագավորությունն ու ստեղծվեց մարզպանություն (Ս վ ա զ յ ա ն. 2006, 195–198, Վ ա ր դ ա ն յ ա ն. 2013, 148–150): Ա. Հակոբյանը Վաչե Բ-ի գահակալության սկիզբը համարում է 450 թ. կամ 451 թ. (տե՛ս Յ ա կ ո բ ե ա ն. 2020, 93):

[13] Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 1983, 112:

[14] Ե ղ ի շ է. 1989, 98, 100, Ղ ա զ ա ր ա յ Փ ա ր պ ե ց ւ ո յ Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն Հ ա յ ո ց. 1982, 122, 124:

[15] Խ ա չ ա տ ր յ ա ն. 2017, 49–50:

[16] Ղ ա զ ա ր ա յ Փ ա ր պ ե ց ւ ո յ Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն Հ ա յ ո ց. 1982, 198:

[17] Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 1983, 15, Ե ղ ի շ է. 1989, 398, 400: Ադրբեջանցի հեղինակ Ֆարիդա Մամեդովան, փորձելով արդարացնել Վաչե Բ-ի արարքը, նշում է, որ նա պատանդ մնաց Պարսկաստանում և այդ պատճառով էլ չմասնակցեց ապստամբությանը (տե՛ս Мамедова. 1986, 190): Սակայն այս տեսակետը քննության ենթակա չէ այն պարզ պատճառով, որ եթե հայ մատենագիրները հիշատակում էին Աշուշա բդեշխի և մարզպանի զավակների պատանդ մնալը, ապա Աղվանից թագավորինը ևս կհիշատակեին թե՛ որպես թագակիր անձ, թե՛ որպես հավանական դաշնակցի կորուստ:

[18] Ս վ ա զ յ ա ն. 2006, 195:

Թեպետ Վաչե Բ-ն դավաճանեց դաշնակիցներին, այնուամենայնիվ, ինչպես կտեսնեք ստորև, ապստամբության առաջին փուլում, անկախ թագավորի գործունեությունից, հայ-աղվանական դաշինքը տվեց իր արդյունքը: Հավատափոխության գործընթացը դյուրացնելու, նախարարներին հսկողության տակ պահելու համար պարսիկները տարածաշրջանի երկրներ ուղարկեցին զորագնդեր և մոգերի բազմություն. «Զի առհասարակ հրաման առեալ էր յարքունուստ, որպես Հայոց աշխարհին, նոյնպէս Վրաց և Աղուանից և Լփնաց, Աղձնեաց և Կորդուաց և Ծաւդէից և Դասն և որ այլ կս ուրեք ուրեք ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունէին զքրիստոնէութիւն»[19]: Միայն նշենք, որ Հայաստանում հայրենասեր ուժերը կարողանում են երկիրը շուտափույթ մաքրել պարսից կայազորներից և մոգերից:

Վիճակն այլ էր Աղվանքում: Այնտեղ կս, ինչպես՝ Հայաստան, ուղարկվել էր թե՛ պարսկական զորագունդ, թե՛ մոգերի բազմություն: Դրան զուգահեռ՝ Աղվանք ներխուժեց նաև «Գունդն Պարսից, որ էր ի կողմանս աշխարհին Հոնաց, դարձաւ այսրէն. եկն եմուտ յաշխարհն մեր. և բազում կս այլ այրուձի որ ի դրանէ եկն»[20]: Կարճ ժամանակահատվածում Աղվանքն ամբողջությամբ գրավվում է պարսկական զորքերի կողմից: Պարսից արքունիքի համար պարզ էր արդեն, որ նախարարների ուրացությունը կեղծ էր, և Աղվանքը գրավելով՝ ապստամբության կենտրոն Հայաստանին կզրկեին հավանական դաշնակցից, ապա Աղվանքով կներխուժեին մարզպանական Հայաստան՝ անակնկալի բերելով հայկական ուժերին, որոնք տեղակայված էին երկրի տարբեր մասերում: Սեբուխտի հրամանատարությամբ գործող բանակի ուժերով կճնշեին նոր-նոր թափ հավաքող ապստամբական շարժումը՝ չներգրավելով արքունիքի հիմնական ուժերին: Դրա վառ ապացույցն է Ղազար Փարպեցու այն հաղորդումը, որ տարածաշրջանում պարսկական զորքերի գործողությունները կոորդինացնելու համար Փայտակարանում[21] էր գտնվում պարսից հազարապետ Միհրներսեհը՝ փորձելով նաև տեղական պարսից կայազորների «գունդ կազմէ և ընդ Աղուանս արձակէ ի Հայս»[22]: Ինչպես պետք էր սպասել, Սեբուխտի զորաբանակը, որին Փարպեցին անվանում է «զօրագլխացն Պարսից»[23], կարճ ժամանակամիջոցում գրավեց Աղվանքի քաղաքներն ու բերդերը: Պարսից ռազմական վերնախավի նպատակն էր՝ առաջանալով հարավ, միանալ Փայտակա-

---

[19] *Ղ ի շ է. 1989, 102, Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 124:*

[20] *Ղ ի շ է. 1989, 140, Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 1983, 112:*

[21] *Փայտակարան քաղաքի տեղորոշման մասին տե՛ս Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 1981, 61–76:*

[22] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 146:*

[23] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 150: Մովսես Կաղանկատվացին Սեբուխտին հիշատակում է որպես «մարզպանին Պարսից՝ Մերսեբուխտայ» (Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 1983, 113): Բագրատ Ուլուբաբյանը, քննության ենթարկելով Աղվանքում մարզպանության ստեղծման թվականը, Սեբուխտին համարում են Աղվանից մարզպան (տե՛ս Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. 1981, 115, ծանոթ. 23): Իսկ Ա. Հակոբյանը, անդրադառնալով վերը նշված հարցին, Սեբուխտին կոչում է Զողի մարզպան (Յ ա կ ո բ ե ա ն. 2020, 92,* Акопян. 2022, 105–106)*: Արտառոց, սկզբնաղբյուրների հետ որևէ աղերս չունեցող տեսակետ է հայտնում Ս. Սարգսյանը՝ Սեբուխտին կոչելով Վրաստանի պարսիկ մարզպան (տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 1969, 179):*

բանի ռազմակայանում կուտակվելիք զորագնդերին, ինչն արդեն պատկառելի թիվ էր կազմելու, ապա ներխուժել Այրարատ:

Աղվանքում ստեղծված վիճակը ստիպում է երկրի հազարապետին և եպիսկոպոսին ոչ թե կապ հաստատել,[24] ինչպես նշում է Ֆ. Մամեդովան, այլ օգնության խնդրանքով շտապել Արտաշատ՝ ներկայացնելով ստեղծված վիճակը[25]: Ելնելով տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական վիճակից՝ ապստամբական շարժումը սկզբնական փուլում գլխավորող մարզպան Վասակ Սյունին[26] հայկական բանակը բաժանեց երեք մասի: Սեբուխտի բանակին դիմագրավելու համար Աղվանք մեկնեց սպարապետ Վարդան Մամիկոնյանը՝ Վասակ մարզպանի հրամանով[27], փորձելով ռազմական գործողությունները ծավալել Կուրից հյուսիս՝ թույլ չտալով պարսկական զորաբանակին մտնել մարզպանական Հայաստանի սահմանները, երկիրը զերծ պահելով պատերազմական գործողությունների թատերաբեմից: Հայկական զորաբանակը պարսիկներին դիմագրավելու համար պետք է «անցանել ընդ սահմանս Վրաց»[28], նպատակ ունենալով թիկունքից հարվածել պարսից բանակին[29]: Հաղթանակի դեպքում, Բյուզանդիայից օգնություն չստանալու պարագայում (Աղվանք արշավանքի նախօրեին կայսրությունն արդեն մերժել էր մարզպանական Հայաստանին որևէ օգնություն տրամադրել)[30], քանդել Ճորա պահակը[31], հոներին պարսկական հյուսիսային գավառներ հարձակման հնարավորություն ապահովելու համար[32]: Եվ ինչպես իրավացիորեն նկատել է Ռ. Մանասերյանը, Պարսկաստանի դեմ առաջիկա պատերազմում Վասակ Սյունին հոներին համարում էր հայերի ռազմական դաշնակիցը[33]: Այս առումով հետաքրքիր տեղեկություն ունի Ղազար Փարպեցին: Երբ սպարապետը հուսալքված իր տոհմակիցներով փորձում էր անցնել Բյուզանդական կայսրություն, ի թիվս այլ հավաստիացումների, մարզպանն իր նամակում նշում է. «… ես մինչ Վրաց մարզպանն էի և դուռն Աղուանից յիմում ձեռին էր՝ բազում զօրագլուխք Հոնաց ընդ իս բարեկամացան ուխտիւ և երդմամբ, և այսօր նովին երդմամբ երթևեկեն առ իս.»[34]: Սակայն դեպքերը դասավորվեցին այլ կերպ. մարզպանի և սպարապետի ճանապարհները բաժանվեցին: Վարդան Մամիկոնյանը դեռ Աղվանք չէր մտել, երբ ապստամբության հաջող ավարտի հույսը կորցրած Վասակ Սյունին տեղեկացնում է Սեբուխտին՝ Վարդան զորավարի գործո-

[24] Мамедова. 1986, 190.

[25] *Եղիշէ. 1989, 140, 142, Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 146:*

[26] *Հարութիւնյան. 2007, № 4, 97:*

[27] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 146:*

[28] *Եղիշէ. 1989, 148:*

[29] Еремян. 1951, 54.

[30] *Իսկանյան. 1991, 100:*

[31] *Ճորա պահակի անվան տակ պետք է հասկանալ Դերբենդի լեռնանցքը (տե՛ս* Кудрявцев, Кудрявцев. 2015, 19–20)*:*

[32] *Փորթուգալ. 1903, 307, ծանոթ. 1, Իսկանյան. 1966, 67:*

[33] Манасерян. 2011, 54.

[34] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 196:*

ղությունների վերաբերյալ, ըստ Եղիշեի՝ «զգունդն երրորդ արարի ընդ Վարդանայ յԱղուանս՝ սակաւաձեռն և ոչ բազմաթիւ: Եւ համարձակ ընդ առաջ նորա, և մի՛ ինչ զանգիտեր ամենևին տալ պատերազմ. գիտեմ՝ զի ի պարտութիւն մատնին առաջի քոյոյ մեծի զօրութեանդ»[35]:

Խաղխաղի ճակատամարտը: Վարդան Մամիկոնյանի Աղվանից արշավանքը

Պարսից զորագլուխը, որը տեղեկացված էր հայկական զորագնդի առաջիկա նպատակների ու սակավաթվության մասին, փորձելով նաև խափանել հայերի ու աղվանական զորաջոկատների միավորումը մեկ հրամանատարության ներքո՝ շարժվեց հարավ՝ հանդիպելու ապստամբական զինուժին: Վարդան Մամիկոնյանի գլխավորած բանակը, որը ղեկավարում էին իրեն համախոհ իշխանները[36], ըստ Բ. Հարությունյանի, Լոռվա վրայով[37] շարժվում էր վրաց մարզպանություն՝ Կուրի հոսանքով Աղվանք անցնելու համար:

Մինչ Խաղխաղի ճակատամարտին և հետագա դեպքերին անդրադառնալը, փորձենք պարզել, թե ինչ թվակազմ ուներ Աղվանքի ազատագրումը ձեռնարկած հայոց զորագունդը: Պատմագրության մեջ, ինչպես Խաղխաղի նշանավոր ճակատամարտը, որը V դ. հայկական ռազմուժի խոշորագույն հաղթանակներից էր, այնպես էլ դրա հետ կապված մյուս դեպքերին քիչ է անդրադարձ եղել, այդ իրաղարձությունները ուսումնասիրվել են հպանցիկ ու մակերեսորեն: Եվ այդ առումով Հ. Հակոբյանն իրավացիորեն փաստում է, որ Խաղխաղն Ավարայրին իր նշանակությամբ չզիջող հաղթական ճակատամարտ էր թշնամու գերակշիռ ուժերի նկատմամբ, որի նշանակությունն աղբյուրներում ավելի քիչ է գնահատված, քան պիտի լիներ իրականում[38]: Աղվանք արշավանքի ելած հայկական զորագնդի թվաքանակի վերաբերյալ ուսումնասիրողները հայտնել են տարբեր տեսակետներ: Ամփոփ անդրադարձ կատարելով հարցին՝ նշենք, որ Ս. Հարությունյանը, քննելով վերոհիշյալ հարցը, արձանագրում է՝ 450 թ. և ապստամբության նախորդ՝ Արշակունիների շրջանում հայերը կարողանում էին մինչև 100 հազար զորք հանել, ու Խաղխաղում այդ թիվը կկազմեր 30 հազար[39]: Ս. Սարգսյանը, հպանցիկ անդրադառնալով բանակի երեք մասի բաժանման հարցին, նշում է, որ յուրաքանչյուր գունդ իր կազմում

---

[35] Ե ղ ի շ է. 1989, 150, Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 150: Բ. Հարությունյանը հավատ չի ընծայում, իր իսկ խոսքով, երկու «մամիկոնյանամետ» պատմիչների հաղորդմանը՝ Վասակի՝ Սեբուխտին ուղղված նամակի վերաբերյալ նշելով, որ առանց մարզպանի տեղեկացմամբ պարսիկները հետախուզական գործողությունների շնորհիվ էլ կարող էին լիովին տեղեկացված լինել թե՛ սպարապետի բանակի թվակազմի, թե՛ ռազմուղու և նպատակների վերաբերյալ (տե՛ս Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2007, 98):

[36] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 148:

[37] Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2003, 46, Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2007, 41, 49: Ըստ Լ. Հակոբյանի նշած երթուղու, սպարապետի զորագունդը շարժվել է Գեղարքունյաց ծովի ավազանով դեպի Աղստևի հովիտ, Գագ ամրոցի մոտով դեպի Խաղխաղ (տե՛ս Հ ա կ ո բ յ ա ն. 1994, 14):

[38] Հ ա կ ո բ յ ա ն. 2003, 62:

[39] Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2003, 189:

ունեցել է մոտավորապես 23–25 հազար մարտիկ[40]: Նմանատիպ տեսակետ է արտահայտում նաև Արմեն Այվազյանը, գրելով՝ 449–450 թթ. մոբիլիզացիայի արդյունքում հայկական երեք բանակների ընդհանուր թիվը կազմում էր 90 հազար[41], իսկ Խաղխաղում երկրորդ բանակը բաղկացած էր 20 հազար հեծելազորից[42]: Հեղինակների այս պնդումները ճիշտ են միայն Արշակունիների շրջանի համար, և, ըստ «Զօրանամակ»-ի ուսումնասիրության, արքունի ու նախարարական գնդերի առավելագույն թվաքանակը կազմել է մոտավորապես 120 հազար[43]: Սակայն նրանք հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Մեծ Հայքի բաժանման արդյունքում նրանից անջատվեցին մի շարք գավառներ, մասնավորապես՝ բդեշխությունները, որոնք միացվեցին հարևան պետություններին[44], և միջնաշխարհը բաժանվեց երկու գերտերությունների միջև: Արևելահայկական թագավորության տարածքը, ըստ Ս. Երեմյանի, բաժանման արդյունքում կազմեց մոտավորապես 134.361 կմ^2,[45] սակայն դրան պետք է ավելանային Արցախը և Ուտիքը՝ մոտ 22.843 կմ^2 տարածությամբ[46], որոնք սկզբում Մեծ Հայքի թագավորության մասն էին կազմում մինչև 428 թ., ապա մինչև 461 թ. հայկական մարզպանության: Եվ բնական է՝ մարզպանական Հայաստանը, որը տարածությամբ կազմում էր Մեծ Հայքի տարածքի մոտավորապես կեսը, V դ. չէր կարող ունենալ 100 հազարանոց զորածող զորաբանակ:

Հ. Հակոբյանը, ուսումնասիրելով հայկական բանակի կառուցվածքը, հիմք ունենալով «Զօրանամակ»-ն ու Ղազար Փարպեցու վերոնշյալ հաղորդումը, որտեղ պատմիչը բարեխղճորեն տալիս է Աղվանք մեկնած իշխանների ցանկը, Խաղխաղում հայոց զորակազմի առավելագույն թվաքանակը համարում է 8–9 հազար՝ 2400 հեծյալ և 6000 հետևակ[47]: Սակայն նրա ուշադրությունից վրիպել է Փարպեցու մեկ այլ հաղորդում, որ սպարապետի բանակում էին գտնվում «այլ գունդք ի զօրացն Մարզպետական այրուձիոյ»[48]: Ճիշտ է՝ մարզպետական գնդերն այդ ժամանակ չունեին այն թվակազմը, ինչ Արշակունյաց շրջանում[49], սակայն մաս են կազմել Աղվանք արշավող հայկական բանակին, և վերջինիս թվաքանակն առավելագույնը կհասներ 13–14 հազարի՝ մեծամասամբ բաղկացած լինելով հեծելազորից, որը հաստատվում է նաև Ղազար Փարպեցու մեկ այլ հաղորդմամբ, որտեղ պատմիչը նշում է՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանը Խաղխաղում բանակը մարտակարգի բերելու ժամա-

---

[40] *Սարգսյան. 1969, 179:*

[41] Айвазян. 2016, 111.

[42] Айвазян. 2016, 114.

[43] Адонц. 1971, 285–287; *Հարությունյան. 2012, 29, 40:*

[44] *Փաստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. 1987, 400:*

[45] *Երեմյան. 1963, 70:*

[46] *Երեմյան. 1963, 41, 117, 118:*

[47] *Հակոբյան. 2003, 62:*

[48] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 148:*

[49] *Ըստ Բ. Հարությունյանի քննության, մարզպետական զորաբաժնի թվաքանակն Արշակունյաց շրջանում կազմել է 15000 զինվոր՝ Հայր մարզպետի հրամանատարությամբ (տե՛ս Հարությունյան. 2012, 27, 28, 29, 41):*

նակ ուներ՝ «բաւականին այրուձիոյն»[50]: Վերը նշված թիվն իրականությանը մոտ է, քանի որ մարզպանական Հայաստանի բանակը, հավանաբար, բաժանվել էր երեք հավասարազոր մասերի, և ընդհանուր գործող զորաբանակի թիվը եղել է մոտ 50 հազար: Այս համակազմը հավաստի է այն առումով, որ հետագա շրջանի վերաբերյալ սկզբնաղբյուրները մարզպանական բանակի միայն հեծելազորի թվաքանակը նշում են 30 հազար[51]: Կարելի է փաստել, որ այս թվակազմի 1/3 մասն էլ[52], ավելացած 3–4 հազար հետևակ, սկսեց արշավանքը դեպի Աղվանք՝ Հայաստանն առաջիկա ներխուժումից զերծ պահելու, ինչպես նաև Աղվանքում քրիստոնեության հաղթանակի համար:

Պետք է նշել նաև՝ պարսկական բանակի նկատմամբ հաղթանակն ունենալու էր մեկ այլ հետևանք ևս. հոները զգալու էին, որ գործ ունեն ռազմական լուրջ ուժի հետ, և ապագա հարաբերություններում այն կհեշտացներ հայ-հունական դաշինքի կնքումը: Հավանաբար, մինչ արշավանքը սկսելը բանակցություններ են եղել հոների հետ՝ միասնական ուժերով պարսիկներին դիմադրավելու համար, և միգուցե Ճորա պահակի գրավումը եղել է հայկական կողմի պարտավորություններից մեկը:

Ինչպես ցույց են տալիս հետագա իրադարձությունները, Սեբուխտն, իր բանակում ունենալով Բաղասականի և Լփինքի զորագնդերը, հայոց բանակին գերազանցելով իր թվակազմով՝ «փութանակի անցանէր ընդ մեծ գետն Կուր անուն, և պատահէր նմա մերձ ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից: Անցանէր բաւանդակէր ամենայն զօրօք իւրովք. ռազմ արարեալ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր. զինեալք և վառեալք ամենայն պատրաստութեամբ ի մարտ պատերազմի ընդդէմ գնդին Հայոց»[53]: Պարսից բանակը, նպաստավոր դիրքեր գրավելով Խաղ-

---

[50] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 152:*

[51] *Պատմութիւն Սեբէոսի. 1979, 66, Մ ա մ ի կ ո ն յ ա ն. 1989, 84, ծանոթ. 80:*

[52] *Նմանատիպ տեսակետ է հայտնում նաև Վ. Խաչատրյանը, նշելով, որ Վարդան Մամիկոնյանի բանակում կար մինչև 10 հազար հեծելազոր (տե՛ս* Х а ч а т р я н. 1992, 131, 133)*:*

[53] *Ե ղ ի շ է. 1989, 150, Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 150: Նկարագրելով վերոհիշյալ իրադարձությունները՝ երկու պատմիչներն էլ Ուտիքի նահանգի Խաղխաղը տեսնում են Աղվանքի կազմում: Նրանց է հետևում նաև Մովսես Կաղանկատվացին՝ նշելով. «... Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից» (տե՛ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 1983, 114): Բ. Ուլուբաբյանն էլ, հիմք ընդունելով պատմիչների վերը նշված հաղորդումները, հետևելով Ն. Ադոնցի տեսակետին, արձանագրում է, որ այդ ժամանակ (V դ. կեսին) Ուտիքն Աղվանքի կազմում էր, բնականաբար՝ Խաղխաղը ևս տեսնելով որպես Աղվանքի մաս (Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. 1981, 115): Սակայն, ինչպես գիտենք մյուս սկզբնաղբյուրների հաղորդումից, քաղաքը մաս էր կազմում հայոց թագավորությանը: Մասնավորապես, Ագաթանգեղոսը նշում է. «... յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց» (տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. 1983, 30): Վրացական սկզբնաղբյուրներում քաղաքը Խիլխալա կամ Խիլախիլա անվամբ նույնպես հիշատակվում է որպես հայոց թագավորության անբաժան մաս (Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ. 1934, 163,* Картлис Цховреба. 2008, 39*): Թե՛ Եղիշեի, թե՛ Փարպեցու և թե՛ Կաղանկատվացու տեղեկություններն վերաբերում են ուշ շրջանին, քանզի պատմիչների աշխատությունները գրվել են Աղվանքում մարզպա-*

խաղ քաղաքի[54] շրջակայքում, որն աշխարհագրորեն ընկած էր Հայաստանի, Վիրքի ու Աղվանքի շփման կետում, դրանով իսկ արգելափակում է ռազմաստրատեգիական նշանակության ճանապարհները դեպի հյուսիս-արևելք՝ Զողի ամրոցը, իսկ հարավ-արևելք՝ Պարտավ քաղաքը[55]: Նրանք առանձնապես չէին էլ շտապում առաջ շարժվելու համար՝ սպասելով հայկական զորամասերին՝ նպատակ ունենալով սահմանագլխին հաղթանակ տանել հակառորդի նկատմամբ, դրա արդյունքում խափանել նաև ցաքուցրիվ աղվանական զորաջոկատների միավորումը սպարապետի զորագնդին: Ապա արշավանքը շարունակել անպաշտպան հայկական գավառներով՝ Այրարատում միանալով պարսկական կողմնորոշում որդեգրած մարզպանին և, ինչպես վերը նշել ենք, Փայտակարանում կուտակված պարսից զորագնդերին՝ առանց ներգրավելու հավելյալ ուժեր՝ ճնշելով ապստամբական շարժումը:

Սակայն, ինչպես ցույց են տալիս հետագա իրադարձությունները, պարսից հրամանատարության ծրագիրն ի չիք դարձավ շնորհիվ այն հանգամանքի, որ Վարդան Մամիկոնյանի զորագունդը հայտնվեց ոչ թե պարսից բանակի դեմ հանդիման, այլ՝ աջ թևի դիմաց և չընկավ Սեբուխտի լարած թակարդը: Այս իրավիճակը պետք է բացատրել միայն այն հանգամանքով, որ, հավանաբար, արշավանքի ընթացքում Վարդան Մամիկոնյանը փոխեց ռազմերթի ուղղությունը՝ քաջ գիտենալով, որ պարսից զորագլուխները տեղեկացված պետք է լինեին իր գործողությունների վերաբերյալ թե՛ իրենց հետախույզների, թե՛ հայ գործակալների միջոցով: Եվ դա էր պատճառը, որ պարսկական զորագնդերը հայտնվեցին անելանելի վիճակում, քանի որ, ըստ Բ. Հարությունյանի, դիրքեր էին գրավել ոչ թե հայոց գնդի դիմաց, այլ՝ դեպի Աղստևի ձորը. ինչի հետևանքով կարող էր կռվել միայն պարսկական զորաբանակի աջ թևը[56]:

Որպես հմուտ ռազմավար գնահատելով իրեն ընձեռված աննախադեպ հնարավորությունը՝ Վարդան Մամիկոնյանը, 450 թ. հոկտեմբերին[57] հայկական զորաբանակը Խաղխաղում մարտակարգի բերելով, իր հետ եղած հետևակին գերազանցող մեծաթիվ այրուձին ոչ թե թողեց ճակատամարտում որպես առանձին գործող միավոր, ինչը ընորոշ էր այդ ժամանակվա ռազմարվեստին, այլ՝ «բաժանեալ՝ տայր ի ձեռս իւրանքանչիւր զօրագլխի. որում աջոյ կողմանն կացուցանէր զօրագլուխ զիշխանն Արշարունեաց զԱրշաւիր Կամսարականն, որ էր և փեսայ զօրավարին Հայոց սրբոյն Վարդանայ տեառնն Մամիկոնէից, ունելով զդուստր նորա ի կնութեան. և նիզակակից տայր նմա զՄուշ զաւագ սեպուհ՝ յազգէն Դիմաքսենից. և զահեակ կողմն տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունւոյ, և զօրավիգն ընդ նման կացուցանէր զՀմայեակ Դիմաքսեանն. և ինքն սուրբ զօրավարն Հայոց Վարդան պատրաստէր զինքն միջոյ տեղւոյն յարձակման: Եւ այսպէս յօրինեալ զճակատն և յԱստուծոյ խնամսն ապաւի-

---

նության կազմավորումից՝ 461 թ. հետո, երբ արդեն Ուտիքն ու վերջինիս կազմում նաև Խաղխաղը գտնվում էին Աղվանքի կազմում: Եվ այս իրողությունն են արձանագրել պատմիչներն իրենց վերոհիշյալ հաղորդմամբ:

[54] *Խաղխաղ քաղաքի տեղադրության շուրջ հեղինակները հայտնել են տարբեր տեսակետներ: Վերջին քննությունը տե՛ս* Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն. *2021, 20–26:*

[55] Х а ч а т р я н. 1992, 133.

[56] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2007, № 4, 99:*

[57] *Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1989, 21, 23,* М а н а с е р я н. 2011, 72.

նեալք՝ յարձակեցան ի վերայ Թշնամեացն»[58]*: Գերակշռություն ունենալով պարսիկների աջ թևի նկատմամբ, քանի որ ճակատամարտի սկզբնական շրջանում Թշնամու կենտրոնը և ձախ թևը ժամանակավորապես մատնված էին անգործության՝ միմյանց հետ արագ համագործակցող հայկական ստորաբաժանումները սկսեցին հարձակումը: Պարսից բանակի աջ թևը, որն իր վրա ընդունեց հակառակորդի հարվածը, «... բեկեալ՝ զձախոյ կողմանն արկեալ, սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին, և փախստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն Լոփնաս գետոյ»*[59]*: Այս հանկարծակի և խիզախ հարձակումը կանխորոշում է ճակատամարտի ընթացքը: Ջախջախված Թշնամու աջ թևի մնացորդները, դիմելով փախուստի, ներխուժեցին նախ կենտրոնի ու ապա նաև ձախ թևի մարտակարգերի մեջ՝ առաջացնելով համընդհանուր շփոթ և դառնալով անկանոն նահանջի պատճառ. «... առ յոյժ յանդուգն յարձակմանն յոլովագոյն այն էր զոր գետամոյնս առնէին քան զանկեալսն սրոյ ի ցամաքի: Եւ ի բազմութենէ դիականցն անկելոց՝ յստակ ջուրք գետոյն յարիւն դառնային, և ոչ գտանէր ոք ամենևին ի նոցանէ ապրեալ և թագուցեալ յանտառախիտ մայրիս դաշտացն»*[60]*: Նահանջը կործանարար եղավ Թշնամու զորագլուխների և բանակի մնացորդների համար, որոնք փորձում էին ընկնել. «...յայնկոյս գետոյն մեծի (Կուր – Ա. Վ.) փախստեալք լինել ճեպէին»*[61]*: Սակայն հայկական բանակի աջ թևը ղեկավարող Արշավիր Կամսարականի*[62] *հրամանով խուճապի մատնված պարսիկներն ընկան նետաձգության տարափի տակ, և շատ քչերին հաջողվեց մազապուրծ անցնել Կուրի ձախ ափը՝ փրկություն գտնելով բուն Աղվանքի տարածքում: Ճակատամարտում սպանվեց Լփնաց թագավորի եղբայրը՝ Վուրկը, իսկ հայկական կողմից նահատակվեց Մուշ Դիմաքսյանը*[63]*: Հայկական բանակի հաղթանակը լիակատար էր. մի քանի ժամվա ընթացքում պարսկական մեծաթիվ բանակը կործանվել էր՝ նույնիսկ չկատարելով իր առջև դրված նվազագույն խնդիրը:*

Խաղխաղի ճակատամարտը հետ Արշակունյաց շրջանի հայկական ռազմուժի փայլուն հաջողություններից էր, և, ըստ Հ. Դավթյանի, հաղթանակը Խաղխաղում ոչ միայն սպարապետի անձնական նվաճումն էր, այլ այն նաև լուրջ ձեռքբերում էր հայոց ապստամբության համար[64]*: Այդ հաղթանակը*[65]

---

[58] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 152:*

[59] *Եղիշէ. 1989, 152: Ուսումնասիրողները Լոփնաս գետը (Կուրի աջակողմյան վտակը) նույնացնում են Հախումի հետ (տե՛ս* Հարությունյան*. 2007, № 4, 100,* Յակոբեան*. 2020, 92,* Շահնազարյան*. 2021, 23):*

[60] *Եղիշէ. 1989, 154,* Կաղանկատուացի*. 1983, 115:*

[61] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 154:*

[62] *Արշավիր Կամսարականի գործունեության մասին տե՛ս* Կոգեան*. 1926, 96–103:*

[63] *Եղիշէ. 1989, 152, 154:*

[64] *Դավթյան. 2015, 621:*

[65] *Հ. Սվազյանը ենթադրում է, որ Խաղխաղի ճակատամարտում մասնակցել են նաև աղվանացիները (տե՛ս* Սվազյան*. 2006, 192): Ֆ. Մամեդովան էլ Աղվանքի ազատագրության գործին ներգրավում է նաև վրացիներին* (Мамедова. 1986, 190)*: Սակայն Եղիշեի հաղորդման համաձայն՝ բուն Աղվանքում արդեն ռազ-*

ժամանակավորապես տապալեց պարսից տիրապետությունն Այսրկովկասի մեծ մասում և հույս ներշնչեց երեք երկրների ժողովուրդներին՝ թոթափելու պարսից ներկայությունը և, ինչու չէ, վերականգնելու իրենց լիակատար անկախությունը: Խաղխաղում պարսից բանակի ջախջախման նշանակությունն այնքան մեծ էր, որ այն ստիպեց պարսից արքունիքին գնալու կարևորագույն զիջումների, որն ինչ-որ կերպ նաև քայքայիչ դեր ունեցավ դաշնակցային պայմանավորվածությունների ի չիք դարձնելու գործում:

Օգտվելով ձեռք բերված հաջողությունից՝ Վարդան Մամիկոնյանը ձեռնարկեց Աղվանքի ազատագրումը: Հաջողության դեպքում նախ վերջնականապես կվերանար հյուսիս-արևելքից Հայաստան ներխուժման վտանգը, Աղվանքը թույլ, բայց որպես հնարավոր դաշնակից կներգրավվեր հակապարսկական դաշինքում և առաջիկայում հայ-հոնական հարաբերությունների հաստատում՝ հակապարսկական ուղղվածությամբ: Եղիշեի աղոտ հաղորդումից գիտենք, որ Աղվանքի ազատագրմանը պետք է մասնակցեր նաև միջնաշխարհում կայանած հայկական երրորդ բանակը՝ Վասակ Սյունու գլխավորությամբ. «ճապուկ անդր անցանէ ի վերայ գնդին Պարսից՝ հալածականս առնել յաշխարհէն Աղուանից»[66], իսկ հետագայում, հավանաբար, միացյալ ուժերով պետք է մաքրեին Փայտակարանի պարսից ռազմակայանը, որի արդյունքում տարածաշրջանը վերջնականապես կթոթափեր պարսից տիրապետությունը: Սակայն դեպքերը դասավորվեցին այլ կերպ:

Կարճ ժամանակ մնալով Խաղխաղում և ավարտելով հետագա ռազմական պատրաստությունները՝ հայոց բանակը ոչ թե առաջացավ հարավ՝ Ուտիքի Ուտի Առանձնակ գավառը[67] կամ գրավելով Պարտավը[68], անցավ Կուր գետը, մտավ Աղվանք՝ անօգուտ ռազմարշավ կատարելով, վատնելով ժամանակը, այլ գետանցեց Կուր գետը. «... հանդէպ Խաղխաղ քաղաքի» մտնելով Կամբեճան գավառը[69], որտեղ գոյություն ուներ հնուց ի վեր գործող գետանց: Դրանից կարճ ժամանակ առաջ գետն անցել էր նաև Սեբուխտի բանակը՝ հայտնվելով Հայաստանում: Աղվանցիների զորաջոկատները, որոնք փախել–թաքնվել էին երկրի լեռնային շրջաններում, միանում են հայկական զորաբանակին: Պարսից

մական գործողությունների ընթացքում. «Եւ բազումք ի նախարարացն Աղուանից և յամենայն շինականացն, որք վասն անուանն Աստուծոյ ցրուեալ և վատնեալ էին յամուրս լերանց Կապկոհի, իբրև տեսին զաջողութիւն գործոյն, զոր կատարէր Աստուած ի ձեռն գնդին Հայոց, գային ժողովէին և նոքա, և խառնէին ի զօրս նոցա, և միաբանք հաւասարք կցորդք լինէին գործոյն նահատակութեան» (տե՛ս Ե ղ ի շ է. *1989, 156):*

[66] Ե ղ ի շ է. *1989, 150:*

[67] Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. *2007, 49:*

[68] *Ա. Այվազյանի աշխատությանը կից քարտեզում նշված է, որ մինչ Կուր գետն անցնելը հայկական բանակը մտել է դեռևս Հայաստանի կազմի մեջ գտնվող Պարտավ քաղաքը, ապա նոր միայն անցել Աղվանք (տե՛ս* А й в а з я н. 2016, карта 1*): Այդ երթուղին իրականությանը չի համապատասխանում. Պարտավը գրավելու որևէ իմաստ չկար, քանի որ այնտեղ պարսից իշխանություններ գոյություն չունեին, քաղաքը մինչև 461 թ. մարզպանական Հայաստանի կազմում էր և հետագայում դարձավ Աղվանից մարզպանության վարչական կենտրոնը:*

[69] *Կամբեճան գավառի վերաբերյալ տե՛ս* Վ ա ր դ ա ն յ ա ն. *2012, 33–45:*

կայազորները, որոնց պարսից զորագլուխը, ըստ Ա. Այվազյանի, թողել էր Աղվանքի ամրոցներում ու Ճորա պահակի ամրություններում, խաղխաղի պարտությունից հետո բարոյալքված վիճակում էին և լուրջ դիմադրություն չէին կարող ցույց տալ հայկական հաղթանակած բանակին[70]*: Եվ այդ պատճառով էլ հայկական զորաբանակը և աղվանացիների զորաջոկատներն արագ երթով անցնում են Աղվանքի կենտրոնական շրջաններով՝ նախ գրավելով Ոստանի-Մարզպան գավառը, ապա շրջանցելով Աղվանքի մայրաքաղաք Կապաղակը*[71]*, քանի որ վերջինիս պարսից փոքրաթիվ կայազորն արդեն դատարկել էր քաղաքը: Շարունակելով արշավանքը՝ բանակը հասավ Աղվանքը Հոնաց աշխարհի հետ բաժանող Ճորա պահակ լեռնանցք, որտեղ գտնվում էր պարսից բերդապահ զորակայանը: Հայ-աղվանական զորաբանակը «...առնուին քանդէին զպահակն, և կոտորէին զզօրսն, որ ի ներքս բնակեալ էին, որ զդուռնն տային ի ձեռն Վահանայ, որ էր յազգէ թագաւորացն Աղուանից»*[72]*: Արքայազն Վահանին, որին Մ. Բարխուտարյանցը համարում է պարսկական կողմնորոշում որդեգրած Վաչե Բ-ի եղբայրը*[73]*, սպարապետը որպես դեսպան ուղարկում է հոների հետ բանակցությունների: Ռուբեն Մանասերյանը, քննելով հայ-հոնական հարաբերությունները, նշում է՝ բանակցությունների նախաձեռնությունը եկել էր հոներից, քանի որ ներկայիս Ստավրոպոլի տարածքում կենտրոնացված նրանց գլխավոր ռազմական ուժերը պատրաստ էին հարձակվել Պարսկաստանի վրա*[74]*, և հոները, բնականաբար, հայերին դիտարկում էին որպես դաշնակիցներ: Բանակցություններն ավարտվում են հաջողությամբ. «...երդմամբ յուխտ մտանել ըստ կարգի իւրեանց օրինաց, յանձն առին և զերդումն քրիստոնէից՝ պահել ընդ նոսա հաստատութեամբ զմիաբանութիւն»*[75]*, և երեսուն օր տևող արշավից հետո, երբ «ժամանակ ձմերայնոյ հասեալ էր»*[76] *հայկական բանակը վերադարձավ հայրենիք:*

Առաջ անցնելով՝ նշենք, որ, եթե խայլանդուր հոները[77] *վերջիվերջո ուշացումով կատարում են իրենց ստանձնած պարտավորությունը, ապա նույնը չենք կարող ասել հավատակից Վիրքի և Աղվանքի մասին, որոնց գործունեության արդյունքում հայերը 451 թ. մայիսի 26-ին Ավարայրի դաշտում միայնակ մնացին պարսից գերակշիռ ուժերի դեմ: Գուցե՞ թե վրացիների օգնությունը ձախողվեց Աշուշա բդեշխի պատանդ մնալով կամ պարսիկների ու*

---

[70] Айвазян. 2016, 119.

[71] *Աղվանքի գլխավոր քաղաքի՝ Կապաղակի տեղի, դիրքի և հարակից այլ հարցերի վերաբերյալ տե՛ս* Исми–Заде. 1962, 54–74; Алиев, Гадиров. 1985, 23–34; *Վարդանյան. 2013, 126–131:*

[72] *Եղիշէ. 1989, 156, Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. 1982, 154:*

[73] *Տե՛ս Բարխուտարեանց. 1902, 76. ծանոթ. 2:*

[74] Манасерян. 2011, 55.

[75] *Եղիշէ. 1989, 156:*

[76] *Եղիշէ. 1989, 160:*

[77] *Ըստ Ռ. Մանասերյանի՝ Վարդան Մամիկոնյանը դաշինք կնքեց ոչ թե Ամիլլայի ենթակայության տակ գտնվող հոների հետ, որոնք այդ ժամանակ (450 թ. աշնանը) արդեն հեռացել էին վերին Դանուբի ավազանը, այլ՝ խայլանդուր հոների հետ (տե՛ս* Манасерян. 2011, 73*):*

Վասակի պառակտիչ գործունեության հետևանքով[78]*: Ինչ վերաբերվում է աղվանացիներին, ապա նրանք չժամանեցին ճակատամարտի դաշտ՝ հետագայում պարսից արքունիքի հետ հաշտվելու մտադրությամբ, որը դաշնակցային պայմանավորվածությունների կոպիտ խախտում էր: Չէ որ դրանից կարճ ժամանակ առաջ հայերն ուժերի գերագույն լարումով ազատագրել էին Աղվանքը՝ փրկելով նրանց պետականությունը և եկեղեցին կործանումից:*

Հավատարիմ իրենց դաշնակցային պարտավորությանը՝ «...յանց Հոնաց, որոց բանս եղեալ էր»[79] *հարձակվում են Աղվանքը վերագրաված պարսից բանակի վրա, ջախջախում և բազմաթիվ գերիներ ու ավար վերցնում՝ այդ ճանապարհին ավերելով նաև պարսկական սահմանային որոշ նահանգներ: Հայաստանում գտնվող պարսից բանակն արագ արձագանքում է հոների արշավանքին և «զՄուշկան Նիսալաւուրտ հանդերձ ամենայն մնացեալ զօրուն գումարէր յաշխարհն Աղուանից և Լփնաց և Ճղբաց և ի Հեճմատակաց և ի Թաւասպարաց և ի Խիբիովան, և յամենայն ամրականս, զորս աւերեալ էր գնդին Հոնաց վասն ուխտին Հայոց»*[80]*: Այս արշավանքով պարսից արքունիքը վերականգնում է իր տիրապետությունն Աղվանքում:*

Եզրակացություն

Ամփոփելով՝ նշենք՝ 450 թ. պարսից տիրապետության դեմ սկսված ազատագրական պայքարը սկզբնական շրջանում լուրջ հաջողությունների հասավ: Ապստամբական ուժերը՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, 450 թ. հոկտեմբերին մարզպանական Հայաստանի սահմանագլխին՝ Խաղխաղում, ջախջախեցին Սեբուխտի զորաբանակին: Այս հաղթանակը հետ Արշակունյանց շրջանի առաջին խոշոր ճակատամարտն էր արտաքին ուժերի դեմ: Խաղխաղում հաղթանակն ոչ միայն կասեցրեց պարսից բանակի մուտքը Հայաստան, այլև հնարավորություն տվեց հայկական զորաբանակին ազատագրել Աղվանքը՝ հասնելով մինչև Ճորա պահակ, որտեղ սպարապետին հաջողվեց դաշինք կնքել խայլանդուր հոների հետ՝ պարսիկներին ապագայում դիմագրավելու համար: Սակայն հետագայում հայ նախարարների ուժերը տրոհվեցին երկու հակամարտ խմբավորումների, որն էլ հնարավորություն տվեց պարսիկներին վճռական հարվածով ճնշելու վաղ միջնադարյան Հայաստանի հուժկու ապստամբական շարժումը:

Արգիշտի Վարդանյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ բուն Աղվանքի պատմաաշխարհագրություն, Մամիկոնյան իշխանական տոհմի պատմություն: Հեղինակ է 1 գրքի և 28 հոդվածի: geghamavan@schools.am

[78] Очерки истории Грузии. 1988, 61.
[79] *Եղիշէ. 1989, 190:*
[80] *Եղիշէ. 1989, 260:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. 1983, քննական բնագիրը Գ. Տեր- Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 700 էջ:

Բարխուտարեանց Մ. 1902, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, «տպ. ս. էջմիածնի», 224 էջ:

Գաբրիելյան Հ. 1979, Կովկասի ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, «Լույս» հրատ., 131 էջ:

Դավթյան Հ. 2015, Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, «ԴԱԼԼ» հրատ., 794 էջ:

Եղիշէ. 1989, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմի, թարգմ. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 448 էջ:

Երեմյան Ս. 1963, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 152 էջ:

Իսկանյան Վ. 1966, Բյուզանդական կողմնորոշման հարցը Վարդանանց պատերազմի ժամանակ. – ՊԲՀ, № 3, էջ 53–70:

Իսկանյան Վ. 1991, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV–VII դդ., Երևան, «Գիտելիք», 639 էջ:

Խաչատրյան Հ. 2017, Հայոց մարզպանների կառավարման հարցի շուրջ. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 48–62:

Խաչատրյան Հ. 2021, Սասանյան վարչակարգի՝ մարզպանությունների հաստատումն Այսրկովկասում. – Մերձավոր Արևելք, XV, էջ 97–115:

Կոգեան Ս. 1926, Կամսարականները «տեարք Շիրակայ եւ Արշարունեաց» պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, «Մխիթարեան տպարան», 179 էջ:

Հակոբյան Թ., Մելիք – Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 1986, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:

Հակոբյան Լ. 1994, Քարտեզագրված պատմություն հայոց, հնագույն ժամանակներից մինչև XVIII դարը, Երևան, «Շաղիկ» հրատ., 138 էջ:

Հակոբյան Հ. 2003, Ավարայրի ճակատամարտը.– ՊԲՀ, № 1, էջ 41–67:

Հարությունյան Բ. 1981, Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 12, էջ 61–76:

Հարությունյան Բ. 2003, Սպարապետ Վարդան Մամիկոնյանը՝ Հայոց թագավոր, Ավարայրի խորհուրդը, «Մուղնի» հրատ., էջ 31–51:

Հարությունյան Բ. 2007, Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), Երևան, Մակմիլան Արմենիա, 103 էջ:

Հարությունյան Բ. 2007, Խաղխաղի ճակատամարտը (450 թ.). – «Հայկական բանակ», № 4, էջ 95–103:

Հարությունյան Բ. 2012, Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակն ըստ «Զօրանամակի». – «Վէմ» (Երևան), № 1, էջ 23–41:

Հարությունյան Ս. 2003, Հայոց պատերազմի 449–450 թթ. ռազմաստրատեգիական ընդհանուր ծրագիրը, Ավարայրի խորհուրդը, «Մուղնի» հրատ., էջ 188–192:

Հովհան Մամիկոնյան. 1989, Տարոնի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Վարդան Վարդանյանի, Երևան, «Խորհրդային գրող», 176 էջ:

Ղազարայ Փարպեցւոյ. 1982, Պատմութիւն Հայոց Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր – Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 540 էջ:

Մելիքսեթ-Բեկ Լ. 1934, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա (Ե–ԺԲ դար), Երևան, Մելքոնյան ֆոնդ, 268 էջ:

Մովսէս Կաղանկատուացի. 1983, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներած. Վարագ Առաքելյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 412 էջ:

Մուրադյան Հ. 1989, Վարդանանց ապստամբության մասին, Երևան, «Հայաստան», 269 էջ:

Յակոբեան Ա. 2020, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղվանքում եւ Հայոց Արևելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Երեւան, «Գիտութիւն» հրատ., 440 էջ:

Շահինյան Ա. 2019, ժառանգական իշխանությունների կազմավորումն Իրանի քրիստոնյա մարզպանություններում. – «Վէմ» (Երևան), № 1, էջ 30–50:

Շահնազարյան Ա. 2021, Խաղխաղ քաղաքի տեղադրության շուրջ. – «Բանբեր հայագիտության», № 2, էջ 20–26:

Պատմութիւն Սեբէոսի. 1979, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 446 էջ:

Սարգսյան Ս. 1969, Հայ ռազմական արվեստի պատմությունից, Երևան, «Հայաստան» հրատ., 218 էջ:

Սվազյան Հ. 2006, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 294 էջ:

Վարդանյան Ա. 2010, Աղվանից մարզպանության կազմավորումը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1–2, էջ 101–106:

Վարդանյան Ա. 2012, Կամբեճան գավառի պատկանելիության հարցի շուրջ. – «Հայոց պատմության հարցեր» (Երևան), 13, էջ 33–45:

Վարդանյան Ա. 2013, Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Երևան, «Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար», 208 էջ:

Վարդանյան Ա. 2018, Մուշեղ Մամիկոնյանի գործունեության գնահատման հարցի շուրջ. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 1, էջ 14–27:

Ուլուբաբյան Բ. 1981, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V–VII դդ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 299 էջ:

Փաւստոսի Բիւզանդացւոց. 1987, Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 456 էջ:

Փորթուգալ Մ. 1903, Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմի եւ քննադատութիւնք, Վենետիկ, «ի տպ. ս. Ղազարու», 477 էջ:

Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 1967, 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա, Պրոկոպիոս Կեսարացի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 360 էջ:

Адонц Н. 1971, Армения в эпоху Юстиниана. Ереван, Изд. Ереванского университета, 526 с.

Айвазян А. 2016, Армяно-персидская война 449–451 гг., кампании и сражения. Ереван, «Воскан Ереванци», 516 с.

Акопян А. 2022, Албания – Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 304 с.

Алиев И. Гадиров Ф. 1985, Кабала – Cabala. Баку, «Элм», 88 с.

Бердзенишвили Н., Дондуа В. 1958, Грузия (Картли-Иберия и Эгриси – Лазика) III–V вв. – Очерки истории СССР. М., Изд. АН СССР, с. 242–254.

Дьяконов М., Мандельштам А. 1958, Средняя Азия в III–V вв. – Очерки истории СССР. М., Изд. АН СССР, с. 331–348.

Еремян С. 1951, Народно-освободительная война армян против персов в 450–451 гг. – «Вестник древней истории» (М.–Л.), № 4, с. 41–60.

Еремян С. 1967, Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт. – «Вестник древней истории» (М.), № 4, с. 47–59.

Исми-заде О. 1962, Кабала – столица древней Кавказской Албании. – Вопросы истории Кавказской Албании, Изд. АН АзССР, с. 54–74.

Картлис Цховреба. 2008, История Грузии. Тбилиси, Изд. «Артануджи», 454 с.

Колесников А. 1981, О термине «марзбан» в Сасанидском Иране. – Палестинский сборник, вып. 27. Л., Изд. АН СССР, с. 49–56.

Кудрявцев А., Кудрявцев Е. 2015, Феодальный город Северного Кавказа (средневековый Дербент в VI–XIII вв.). Ставрополь, Изд. «Северо–Кавказский федеральный университет», 307 с.

Луконин В. 1969, Завоевания Сасанидов на востоке и проблема Кушанской абсолютной хронологии. – «Вестник древней истории» (М.), № 2, с. 20–44.

Мамедова Ф. 1986, Политическая история и историческая география Кавказской Албании (III в до н. э.– VIII в. н. э.). Баку, «Элм», 284 с.

Манасерян Р. 2011, Европейские гунны и Ближний Восток. Ереван, «Лусакн», 80 с.

Очерки истории Грузии. 1988, т. II, Грузия в IV–X веках. Тбилиси, «Мецнереба», 580 с.

Ртвеладзе Э. 2019, Кушанское царство, династии, государство, народ, язык, письменность, религии. Ташкент, «Историческая библотека», 133 с.

Хачатрян В. 1992, Вопросы военного искусства в книге Егише «О Вардане и войне армянской». – «Вестник общественных наук» НАН РА, № 1, с. 126–139.

Хуршудян Э. 2003, Армения и Сасанидский Иран (историко-культурологическое исследование). Алматы, «Print - S», 474 с.

АРМЯНО-АЛУАНКСКОЕ СОЮЗНИЧЕСТВО ПРОТИВ ПЕРСИДСКОГО ГОСПОДСТВА
(В середине V века)

АРГИШТИ ВАРДАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: Армения, Закавказье, Алуанк, Сасанидская Персия, Вардан Мамиконян, Васак Сюни, Егише, Лазарь Парпеци, битва при Хагхаге, река Кура, Себухт, гунны.

Наряду с навязыванием закавказским странам системы марзпанства (персидская административная единица) Сасанидская Персия с середины V в. предприняла попытку искоренения христианства и окончательного

утверждения зороастризма в Армении, Алуанке (Арран) и Вирке (Картли). Но, как и следовало ожидать, это вызвало противостояние названных стран, вылившееся в восстание. Пытаясь силой подчинить их своей воле, персидская армия во главе с Себухтом в начале осени 450 г. захватила Алуанк, но в октябре того же года армянская армия под командованием спарапета (верховный главнокомандующий войск) Вардана Мамиконяна нанесла сокрушительный удар по численно превосходившей персидской армии и освободила Алуанк. Успешно завершив военный поход на Чора пахак (Каспийские ворота, Дербентский проход), спарапет заключил также союз с гуннами, дабы в дальнейшем объединенными силами оказать сопротивление персам. Однако персидскому двору и марзпану (наместник) Армении Васаку Сюни удалось «лишить» восставших возможных союзников, в частности, отрекшийся от своей веры алуанкский царь Вече II встал на путь предательства, и уже 26 мая 451 г. в Аварайрской битве армяне остались один на один против превосходящих сил персов. Свои союзнические обязательства выполнили лишь гунны, вторгшись в северные провинции Персии, но персам удалось дать отпор и восстановить персидское господство в Закавказье.

Аргишти Варданян – к. и. н.,старший научный сотрудник отдела истории средних веков Института истории НАН РА, преподаватель кафедры истории сопредельных стран Армении исторического факультета ЕГУ. Научные интересы: историческая география Алуанка (Арран), история княжеского рода Мамиконянов. Автор 1 книги и 28 статей.
geghamavan@schools.am

ARMENIAN-CAUCASIAN ALBANIAN ALLIANCE AGAINST PERSIAN RULE
(In the middle of the V century)

ARGISHTI VARDANYAN

S u m m a r y

Keywords: Armenia, Transcaucasia, Caucasian Albania, Sasanian Persia, Vardan Mamikonyan, Vasak Syuni, Yeghishe, Ghazar Parpetsi, battle of Khaghagh, Kura River, Sebukht, the Huns.

Along with the imposition of the marzpan system (administrative unit) on the regional countries, the Persian royal court, from the middle of the 5th century, made an attempt to eradicate Christianity and establish Zoroastrianism in Armenia, Caucasian Albania and Virk. But, as expected, this caused a confrontation between the above mentioned countries, which culminated in an uprising. Trying to force them to submit to their will, the Persian army led by Sebukht captured Caucasian Albania in the early autumn of 450, but in October

of the same year, Armenian army under the command of sparapet (supreme commander of the armed forces) Vardan Mamikonyan dealt a crushing blow to the numerically superior Persian army and liberated Caucasian Albania. Having successfully completed the military campaign against Chorapahak (Caspian Gates, the Derbent passage), the sparapet also concluded an alliance with the Huns in order to further resist the Persians with united forces. However, the Persian royal court and the marzpan (viceroy) Vasak Syuni managed to "deprive" the rebels of possible allies. In particular, the king of Caucasian Albania Vache II, who renounced his faith, embarked on the path of betrayal, and on May 26, 451, in the Battle of Avarayr, the Armenians were left face to face against the superior forces of the Persians. Only the Huns fulfilled their allied obligations by invading the northern provinces of Persia, but the Persians managed to fight back and restore Persian rule in Transcaucasia.

Argishti Vardanyan – Candidate of History, Senior Researcher at the Department of History of Middle Ages of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Lecturer at the Chair of History of Armenia's Neighboring Countries, YSU Faculty of History. Scientific interests: history and geography of Caucasian Albania, history of the princely family of Mamikonyans. Author of 1 monograph and 28 articles.
geghamavan@schools.am